Հավելված

Հայաստանի Հանրապետության
պաշտպանության նախարարի
2018թ. Դեկտեմբեր «17»-ի
N 1551 հրամանի

# ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԿԱՐԳ

## I. Զինվորական կոչում շնորհելը

1. Սույն կարգով (այսուհետև՝ Կարգ) կարգավորվում են ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետև՝ Նախարարություն) համակարգում պայմանագրային զինծառայողներին, ինչպես նաև պահեստազորում հաշվառվածներին զինվորական կոչում շնորհելու հետ կապված հարաբերությունները:

2. Նախարարության համակարգի պայմանագրային զինծառայողների զինվորական կոչումների հաշվառումը, առաջին և հերթական զինվորական կոչումների շնորհման (այդ թվում՝ նախկինում իջեցված), կոչման իջեցման կամ դրանից զրկելու՝ օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքերում համապատասխան փաստաթղթերի նախապատրաստումն իրականացնում է զորամասի (զինվորական կառավարման մարմնի) կադրային աշխատանքներն իրականացնող պաշտոնատար անձը, իսկ այդպիսի հաստիքի բացակայության դեպքում՝ վերադաս զորամասի (զինվորական կառավարման մարմնի) կադրային աշխատանքներն իրականացնող պաշտոնատար անձը:

3. Զինվորական կոչման կրման՝ օրենքով սահմանված ժամկետը լրացող և շնորհվող զինվորական կոչմանը հավասար կամ բարձր զինվորական կոչման համապատասխան խմբի պաշտոն զբաղեցնող, ինչպես նաև «զինվորական կոչման իջեցում մեկ աստիճանով» կարգապահական տույժը կրելու ժամկետը լրանալու կամ որպես խրախուսանք կարգապահական տույժը հանվելու դեպքում զինծառայողները հերթական զինվորական կոչում շնորհելու ներկայացվում են մինչև կրման ժամկետը լրանալու ամսին նախորդող ամսվա 20-ը՝ նրանց անվանացուցակները (ձև 1) էլեկտրոնային փոստով ուղարկելով տվյալ զինվորական կոչումը շնորհելու իրավասություն ունեցող

պաշտոնատար անձին: Ընդ որում` հերթական զինվորական կոչում շնորհելու ժամկետը հաշվարկելիս հաշվի են առնվում օրենքով սահմանված` զինվորական կոչումի կրման ժամկետում չհաշվարկվող ժամանակահատվածները, որոնց հաշվառումը կենտրոնացված կարգով իրականացվում է անձնակազմի կառավարման էլեկտրոնային համակարգում, իսկ ըստ ստորաբաժանումների` կադրային աշխատանքներն իրականացնող պաշտոնատար անձի կողմից:

4. Օրենքով սահմանված պահանջների խախտում կամ թերություն (որը հնարավոր չէ տեղում վերացնել) հայտնաբերվելու դեպքում հերթական կոչման շնորհման ներկայացմանն ընթացք չի տրվում, այդ մասին գրավոր հայտնվում է ներկայացումն ուղարկող զորամասի (զինվորական կառավարման մարմնի) հրամանատարին (պետին): Այս դեպքերում զինծառայողը հերթական զինվորական կոչման շնորհման կրկին ներկայացվում է խոչընդոտող հանգամանքները վերանալուց կամ թերությունը վերացնելուց հետո:

5. Հերթական զինվորական կոչման ներկայացնելուց հետո զինծառայողի ազգանվան, անվան, հայրանվան, պաշտոնի, հաստիքի փոխվելու դեպքերում ներկայացնող հրամանատարը (պետը) այդ մասին 1 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է կոչում շնորհելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին` համապատասխան փոփոխություններ կատարելու համար:

6. Հերթական զինվորական կոչման ներկայացնելուց հետո զինծառայողի նկատմամբ քրեական գործ հարուցվելու, կամ ծառայողական քննություն նշանակվելու, կամ կարգապահական տույժ ստանալու, կամ այլ դեպքերում, որոնք կարող են խոչընդոտել հերթական զինվորական կոչման շնորհման գործընթացին, ներկայացնող հրամանատարը (պետը) այդ մասին 1 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է կոչում շնորհելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին և այդ հիմքերով կոչման շնորհման գործընթացը կասեցվում է:

7. Օրենքով սահմանված պահանջներին համապատասխան ներկայացումների հիման վրա նախապատրաստվում է կոչում շնորհելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի հրամանի նախագիծ (ձև 4-28) և կոչման կրման ժամկետը լրանալու օրվանից առաջ մեկ շաբաթվա ընթացքում ներկայացվում ստորագրման:

8. Ստորագրված հրամանները համարակալվում են տվյալ զինծառայողի կոչման կրման ժամկետը լրանալու օրվանից հետո` եռօրյա ժամկետում: Հրամանը առաքվում է բոլոր շահագրգիռ ստորաբաժանումներ, այդ թվում` զինծառայողի զբաղեցրած պաշտոնի

ՌՀՄ-ին համապատասխան վարչության կամ ծառայության կամ առանձին բաժնի պետին (բացակայության դեպքում՝ իրավասու պաշտոնատար անձին):

9. Օրենքով սահմանված հիմքերով և կարգով վաղաժամկետ, ինչպես նաև զինծառայողին զբաղեցրած պաշտոնով նախատեսված զինվորական կոչումից մեկ աս-տիճան բարձր հերթական զինվորական կոչում խրախուսման կարգով շնորհելու համար տվյալ զինվորական կոչում շնորհելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին ուղարկվում է հիմնավորված և ըստ վերադասության համաձայնեցված ներկայացում (ձև 2): Դրական որոշում կայացվելու դեպքում գրավոր հրամանով հայտարարվում է խրախուսումը, այնուհետև անհատական հրամանով շնորհվում է կոչումը՝ պահպանելով Կարգի 4-րդ, 5-րդ, 6-րդ և 8-րդ կետերով սահմանված ընթացակարգերը:

10. Պահեստազորում զինվորական կոչում շնորհելու փաստաթղթերի (ձև 3) նախապատրաստումը և ներկայացումն իրականացնում է տվյալ անձի հաշվառման վայրի զինկոմիսարիատը՝ օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում:

11. Զինծառայողի զինվորական կոչումը մեկ աստիճանով իջեցվում է տվյալ զինվորական կոչում շնորհելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի հրամանով (ձև 30)՝ հիմք ընդունելով օրենքով սահմանված կարգով նրա նկատմամբ կիրառված «զինվորական կոչման իջեցում մեկ աստիճանով» կարգապահական տույժը:

12. Զինծառայողը զինվորական կոչումից զրկվում է դատական կարգով, ինչպես նաև պարտադիր զինվորական ծառայության ընթացքում օրենքով սահմանված կարգով պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պայմանագիր կնքած պայմա-նագրային զինծառայողը՝ հաստիքների կրճատման (եթե զինծառայողը համաձայն չէ նշանակվելու այլ զինվորական պաշտոնի) կամ կադրերի տրամադրության տակ գտնվելու ժամկետը լրանալու (եթե զինծառայողը համաձայն չէ նշանակվելու այլ զինվորական պաշտոնի) կամ մինչև պայմանագրի ժամկետը լրանալը զինվորական ծառայությունից արձակվելու զեկուցագիր ներկայացնելու, ինչպես նաև ռազմաուսումնական հաստատությունից կամ սպայական կամ սերժանտական դասընթացներից կամ ակադեմիական ուսումնառությունից կամ պետական լիազոր մարմնի պատվերով միջին մասնագիտական կամ բարձրագույն կամ հետբուհական ուսումնական հաստատությունից իր դիմումի համաձայն ազատվելու կամ անբավարար առաջադիմության կամ անկարգապահության հիմքով հեռացվելու հիմքերի առկա-յության դեպքերում, երբ վերջինս օրենքով սահմանված կարգով ենթակա է ուղարկվելու

պարտադիր զինվորական ծառայության՝ չծառայած ժամկետը շարունակելու: Այս դեպքերում զինծառայողը զրկվում է պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պայմանագիր կնքելուց հիման վրա (կնքելուց հետո) նրան շնորհված զինվորական կոչումներից:

13. ՀՀ պաշտպանության նախարարության համակարգ այլ պետական մարմիններից հետագա ծառայությունը շարունակելու տեղափոխված պայմանագրային զինծառայողներին շնորհվում են նրանց շնորհված հատուկ կոչումներին (բացառությամբ զինվորական կոչումները) համապատասխան զինվորական կոչումներ (ձև 31):

## II. Զինվորական կոչումներ շնորհելու իրավասությունները

14. Զինծառայողներին զինվորական կոչումներ շնորհում են.

1) ՀՀ պաշտպանության նախարարը՝

ա. առաջին սպայական և հերթական ավագ սպայական կոչումները,

բ. ՀՀ պաշտպանության նախարարի անմիջական ենթակայության կառուցվածքային ստորաբաժանումների զինծառայողների զինվորական կոչումները, ինչպես նաև դրանց մեկ աստիճանով իջեցումները,

գ. վաղաժամկետ և զբաղեցրած պաշտոնով նախատեսված կոչումից մեկ աստիճան բարձր սպայական զինվորական կոչումները,

դ. անհրաժեշտության դեպքում՝ սույն կետում նշված բոլոր կոչումները,

2) ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետը՝

անմիջական ենթակայության կառուցվածքային ստորաբաժանումների և սույն հավելվածով այլ պաշտոնատար անձանց իրավունք չվերապահված՝

ա. մինչև «կապիտանը» ներառյալ հերթական կոչումները, ինչպես նաև դրանց մեկ աստիճանով իջեցումները,

բ. վաղաժամկետ և զբաղեցրած պաշտոնով նախատեսված կոչումից մեկ աստիճան բարձր ենթասպայական զինվորական կոչումները,

գ. անհրաժեշտության դեպքում՝ սույն կետում նշված բոլոր կոչումները՝ բացառությամբ պաշտպանության նախարարի իրավասությանը վերապահվածները,

3) վարչության պետ - գլխավոր շտաբի պետի տեղակալները, բանակի հրամանատարը՝

անմիջական ենթակայության կառուցվածքային ստորաբաժանումների և սույն հավելվածով այլ պաշտոնատար անձանց իրավունք չվերապահված՝

ա. մինչև «կապիտանը» ներառյալ հերթական կոչումները, ինչպես նաև զինվորական կոչումների մեկ աստիճանով իջեցումները՝ մինչև «ավագ» զինվորական կոչումը ներառյալ,

բ. վաղաժամկետ և զբաղեցրած պաշտոնով նախատեսված կոչումից մեկ աստիճան բարձր ենթասպայական զինվորական կոչումները՝ մինչև «ավագ» զինվորական կոչումը ներառյալ,

4) բարձրագույն սպայական կազմի հաստիքային դասակարգումով՝ վարչությունների, ռազմաուսումնական հաստատությունների և ռազմական ոստիկանության պետերը, ՀՀ զինվորական կոմիսարը և բանակային կորպուսների (զորամիավորումների) հրամանատարները՝

անմիջական ենթակայության կառուցվածքային ստորաբաժանումների և սույն հավելվածով այլ պաշտոնատար անձանց իրավունք չվերապահված՝

ա. մինչև «կապիտանը» ներառյալ հերթական կոչումները, ինչպես նաև զինվորական կոչումների մեկ աստիճանով իջեցումները՝ մինչև «ավագ» զինվորական կոչումը ներառյալ,

բ. վաղաժամկետ և զբաղեցրած պաշտոնով նախատեսված կոչումից մեկ աստիճան բարձր ենթասպայական զինվորական կոչումները՝ մինչև «ավագ» զինվորական կոչումը ներառյալ,

5) դիվիզիաների (միավորումների) հրամանատարները, «գնդապետ» դասակարգումով վարչությունների պետերը՝

անմիջական ենթակայության կառուցվածքային ստորաբաժանումների և սույն կետով այլ պաշտոնատար անձանց իրավունք չվերապահված՝

ա. ենթասպայական և շարքային կազմերի զինվորական կոչումները, ինչպես նաև զինվորական կոչումների մեկ աստիճանով իջեցումները՝ մինչև «ավագ» զինվորական կոչումը ներառյալ,

բ. վաղաժամկետ և զբաղեցրած պաշտոնով նախատեսված կոչումից մեկ աստիճան բարձր ենթասպայական զինվորական կոչումները՝ մինչև «ավագ» զինվորական կոչումը ներառյալ,

6) առանձին զորամասի կարգավիճակ ունեցող կառուցվածքային ստորաբաժանումների առնվազն «փոխգնդապետ» հաստիքային դասակարգումով հրամանատարները՝

անմիջական ենթակայության կառուցվածքային ստորաբաժանումների և սույն կետով այլ պաշտոնատար անձանց իրավունք չվերապահված՝

ա. ենթասպայական և շարքային կազմերի զինվորական կոչումները, ինչպես նաև զինվորական կոչումների մեկ աստիճանով իջեցումները՝ մինչև «ավագ» զինվորական կոչումը ներառյալ,

բ. վաղաժամկետ և զբաղեցրած պաշտոնով նախատեսված կոչումից մեկ աստիճան բարձր ենթասպայական զինվորական կոչումները՝ մինչև «ավագ» զինվորական կոչումը ներառյալ:

7) առանձին զորամասի կարգավիճակ ունեցող կառուցվածքային ստորաբաժանումների հրամանատարները՝

անմիջական ենթակայության կառուցվածքային ստորաբաժանումների և սույն կետով այլ պաշտոնատար անձանց իրավունք չվերապահված՝

բ. կրտսեր ենթասպայական և շարքային կազմերի զինվորական կոչումները (այդ թվում՝ վաղաժամկետ և զբաղեցրած պաշտոնով նախատեսված կոչումից մեկ աստիճան բարձր):

# Ա Ն Վ Ա Ն Ա Ց Ու Ց Ա Կ

ՀՀ ՊՆ_______________ զորամասի զինծառայողների, ովքեր

20    թ. _______________ամսին ենթակա են (չեն) հերթական (առաջին) զինվորական կոչման շնորհման

| Հ/հ | Զինվորական կոչումը, շնորհման հրամանը և ամսաթիվը | Անունը, հայրանունը, ազգանունը | Զբաղեցրած պաշտոնը, նշանակման հրամանը և ամսաթիվը, պաշտոնին համապատասխան զինվորական կոչումը | Ծանոթագրություն |
|---|---|---|---|---|
| ԵՆԹԱԿԱ ԵՆ ՇՆՈՐՀՄԱՆ | | | | |
| հերթական «մայոր» զինվորական կոչման | | | | |
| 1. | | | | |
| 2. | | | | |
| առաջին սպայական «լեյտենանտ» զինվորական կոչման | | | | |
| 1. | | | | |
| ԵՆԹԱԿԱ ՉԵՆ ՇՆՈՐՀՄԱՆ | | | | |
| հերթական «մայոր» զինվորական կոչման | | | | |
| 1. | | | | |

Ծանոթագրություն: Այյուսակի «ԵՆԹԱԿԱ ՉԵՆ ՇՆՈՐՀՄԱՆ» բաժնում լրացվում են կոչման կրման օրացուցային ժամկետները լրացած, սակայն հերթական զինվորական կոչման շնորհման իրավունքը չծագած անձանց տվյալները՝ «Ծանոթագրություն» սյունակում նշելով հերթական զինվորական կոչում շնորհելուն խոչընդոտող հանգամանքները (գործող կարգապահական տույժ, դատվածություն և այլն)

Զինվորական կոչումը շնորհվել է  **Ձև 2**

հրաման N

«   »   20  թ.

Կ.Տ.

# Ն Ե Ր Կ Ա Յ Ա Ց Ու Մ

Շնորհելու ______________________________________________

(վաղաժամկետ կամ զբաղեցրած պաշտոնով նախատեսված զինվորական կոչումից մեկ աստիճան բարձր)

հերթական ____________________ զինվորական կոչում՝

(ներկայացվող զինվորական կոչումը)

## ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

զինվորական կոչումը ______________________________________

(զինվորական կոչումը, շնորհման հրամանի համարը, ամսաթիվը)

______________________________________________

(անունը, հայրանունը, ազգանունը)

զբաղեցրած պաշտոնը ______________________________________

(զբաղեցրած պաշտոնը, նշանակման հրամանի համարը, ամսաթիվը)

______________________________________________

զինվորական ծառայությունը ________________________________

(զինծառայության սկիզբը, ժամանակահատվածները)

______________________________________________

## ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Զորամասի հրամանատար ______________________________________

Կ.Տ.  (զինվորական կոչումը, ստորագրությունը, անունը, հայրանունը, ազգանունը)

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է

---

(ուղղակի պետի պաշտոնը, կոչումը, ստորագրությունը, անունը, հայրանունը, ազգանունը)

«   »   20   թ.

---

(ուղղակի պետի պաշտոնը, կոչումը, ստորագրությունը, անունը, հայրանունը, ազգանունը)

«   »   20   թ.

---

(ուղղակի պետի պաշտոնը, կոչումը, ստորագրությունը, անունը, հայրանունը, ազգանունը)

«   »   20   թ.

---

(ուղղակի պետի պաշտոնը, կոչումը, ստորագրությունը, անունը, հայրանունը, ազգանունը)

«   »   20   թ.

---

(ուղղակի պետի պաշտոնը, կոչումը, ստորագրությունը, անունը, հայրանունը, ազգանունը)

«   »   20   թ.

Զինվորական կոչումը շնորհվել է **Ձև 3**

հրաման N

«      »                    20    թ.

Կ.Տ.

# Ն Ե Ր Կ Ա Յ Ա Ց Ու Մ

Շնորհելու պահեստազորի ______________________________

(առաջին կամ հերթական)

______________________ զինվորական կոչում՝

(ներկայացվող զինվորական կոչումը)

## ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

պահեստազորի զինվորական կոչումը ______________________________

(զինվորական կոչումը, շնորհման հրամանի համարը, ամսաթիվը)

______________________________

(անունը, հայրանունը, ազգանունը)

ծննդյան թիվը ______________ զինկոմիսարիատը ______________

պահեստազորի խումբը ______________ կարգը ______________

զինվորական ծառայությունը ______________________________

(զինծառայության սկիզբը, ժամանակահատվածները)

______________________________

մասնակցությունը պահեստազորային պատրաստության շրջանակներում կազմակերպված միջոցառմանը ______________________________

(միջոցառումը, անցկացման ժամկետները, բնութագրական տվյալներ )

______________________________

______________________________

______________________________

Զինվորական կոմիսար ______________________________

Կ.Տ.

(զինվորական կոչումը, ստորագրությունը, անունը, հայրանունը, ազգանունը)

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է

__________________________________________________________________

(ուղղակի պետի պաշտոնը, կոչումը, ստորագրությունը, անունը, հայրանունը, ազգանունը)

«   »   20  թ.

__________________________________________________________________

(ուղղակի պետի պաշտոնը, կոչումը, ստորագրությունը, անունը, հայրանունը, ազգանունը)

«   »   20  թ.

__________________________________________________________________

(ուղղակի պետի պաշտոնը, կոչումը, ստորագրությունը, անունը, հայրանունը, ազգանունը)

«   »   20  թ.

__________________________________________________________________

(ուղղակի պետի պաշտոնը, կոչումը, ստորագրությունը, անունը, հայրանունը, ազգանունը)

«   »   20  թ.

__________________________________________________________________

(ուղղակի պետի պաշտոնը, կոչումը, ստորագրությունը, անունը, հայրանունը, ազգանունը)

«   »   20  թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

N -Ա

« ____ » _________20 թ. ք. Երևան

ՀԵՐԹԱԿԱՆ ՍՊԱՅԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄ
ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի հրետանու ֆակուլտետի հրետանու մարտավարության ամբիոնի դասախոս, կապիտան Արսեն Արամայիսի Ավագյանին **շնորհել** հերթական սպայական «**մայոր**» զինվորական կոչում:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

N -Ա

« ____ » _________20 թ. ք. Երևան

## ՌԱԶՄԱՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ ԱՌԱՋԻՆ ՍՊԱՅԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. ՀՀ պաշտպանության նախարարության Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանի 2018 թվականի ներքոհիշյալ շրջանավարտներին **շնորհել** առաջին սպայական «**լեյտենանտ**» զինվորական կոչում՝ փոխադրելով ՀՀ զինված ուժերի սպայական կազմ.

1) կրտսեր սերժանտ Կարեն Արարատի Գրիգորյանին,

2) շարքային Կարեն Արարատի Գաբրիելյանին:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

N -Ա

« ____ » _________20 թ. ք. Երևան

ՌԱԶՄԱՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ
ԱՌԱՋԻՆ ՍՊԱՅԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄ
ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Մխիթար Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարանի ռազմաբժշկական ֆակուլտետի ինտերնատուրայի 2018 թվականի ներքոհիշյալ շրջանավարտներին **շնորհել** առաջին սպայական «**բ.ծ. լեյտենանտ**» զինվորական կոչում՝ փոխադրելով ՀՀ զինված ուժերի սպայական կազմ.

1) սերժանտ Պողոս Պետրոսի Մարտիրոսյանին,

2) շարքային Կիրակոս Վահանի Մամիկոնյանին:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

N -Ա

« ____ » _________20 թ. ք. Երևան

## ԲՈՒՀ-ՈՒՄ ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԱՌԱՋԻՆ ՍՊԱՅԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Երևանի պետական համալսարանում սովորելու ընթացքում ռազմական պատրաստություն անցած և ՀՀ զինված ուժեր պարտադիր զինվորական ծառայության զորակոչված ներքոհիշյալ զինծառայողներին **շնորհել** առաջին սպայական «**լեյտենանտ**» զինվորական կոչում՝ փոխադրելով ՀՀ զինված ուժերի սպայական կազմ.

1) շարքային Պողոս Պետրոսի Մարտիրոսյանին,

2) շարքային Կիրակոս Վահանի Մամիկոնյանին:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

# Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
# Պ Ա Շ Տ Պ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն   Ն Ա Խ Ա Ր Ա Ր

## Հ Ր Ա Մ Ա Ն

N          -Ա

« ____ » _________20     թ.                                                                                         ք. Երևան

ԱՌԱՋԻՆ ՍՊԱՅԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ   Ե Մ

ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի դասակի հրամանատար, սերժանտ Պողոս Պետրոսի Մարտիրոսյանին **շնորհել** առաջին սպայական «**լեյտենանտ**» զինվորական կոչում՝ փոխադրելով ՀՀ զինված ուժերի սպայական կազմ:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

# Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
# Պ Ա Շ Տ Պ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն Ն Ա Խ Ա Ր Ա Ր

## Հ Ր Ա Մ Ա Ն

N -Ա

« ____ » _________20 թ. ք. Երևան

ՊԱՀԵՍՏԱԶՈՐԻ ԱՌԱՋԻՆ ՍՊԱՅԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Պահեստազորային պատրաստության շրջանակներում վարժական հավաքներին մասնակցած ներքոհիշյալ պահեստազորայիններին **շնորհել** պահեստազորի առաջին սպայական «**լեյտենանտ**» զինվորական կոչում՝ փոխադրելով սպայական կազմ.

1) պահեստազորի սերժանտ Պողոս Պողոսի Պողոսյանին (ՀՀ Նոյեմբերյանի զինվորական կոմիսարիատ),

2) պահեստազորի կրտսեր սերժանտ Արամ Կորյունի Հակոբյանին (Գավառի զինվորական կոմիսարիատ):

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն

Պ Ա Շ Տ Պ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն   Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ա Ն

00000 Զ Ո Ր Ա Մ Ա Ս Ի   Հ Ր Ա Մ Ա Ն Ա Տ Ա Ր

# Հ Ր Ա Մ Ա Ն

N          -Ա

« ____ » _________20     թ.                                                                      ք.Երևան

## ՀԵՐԹԱԿԱՆ ԵՆԹԱՍՊԱՅԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 15-րդ հոդվածի 1-ին մասի`

**Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ   Ե Մ**

ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի նյութական ապահովման վաշտի դասակի հրամանատար, ավագ Արսեն Արամայիսի Ավագյանին **շնորհել** հերթական ենթասպայական «**ենթասպա**» զինվորական կոչում:

ՀՀ ՊՆ 00000 ԶՈՐԱՄԱՍԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏ

# ՀՐԱՄԱՆ

N -Ա

« ____ » _________20 թ. ք. Երևան

## ԱՎԱԳ ԵՆԹԱՍՊԱՅԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. ՀՀ ՊՆ ենթասպաների դպրոցի վաշտի սերժանտի ծրագրով դասընթացներն ավարտած ներքոհիշյալ զինծառայողներին **շնորհել** ավագ ենթասպայական «**ենթասպա**» զինվորական կոչում՝ փոխադրելով ՀՀ զինված ուժերի ենթասպայական կազմ.

1) շարքային Արսեն Արամայիսի Ավագյանին,

2) շարքային Պետրոս Նապոլեոնի Ասատրյանին:

ՀՀ ԶՈՒ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն

Զ Ի Ն Վ Ա Ծ   Ո Ւ Ժ Ե Ր Ի   Գ Լ Խ Ա Վ Ո Ր   Շ Տ Ա Բ Ի   Պ Ե Տ

# Հ Ր Ա Մ Ա Ն

N -Ա

« ____ » _________20 թ.    ք. Երևան

ԱՎԱԳ ԵՆԹԱՍՊԱՅԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄ
ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ   Ե Մ

1. ՀՀ ՊՆ ենթասպաների դպրոցի վաշտի սերժանտի ծրագրով դասընթացներն ավարտած ներքոհիշյալ զինծառայողներին **շնորհել** ավագ ենթասպայական «**ենթասպա**» զինվորական կոչում.

1) կրտսեր սերժանտ Արմեն Արամի Ավագյանին,

2) սերժանտ Պողոս Նապոլեոնի Ասատրյանին:

ՀՀ ԶՈՒ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
Պ Ա Շ Տ Պ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն   Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ա Ն
00000 Զ Ո Ր Ա Մ Ա Ս Ի   Հ Ր Ա Մ Ա Ն Ա Տ Ա Ր

# Հ Ր Ա Մ Ա Ն

N -Ա

« ____ » _________20 թ.    ք.Երևան

## ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՎԱԳ ԵՆԹԱՍՊԱՅԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի ա. ենթակետի, 32-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի (առաջին պայմանագրի կնքմամբ զինվորական ծառայության ներգրավում)՝

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ   Ե Մ

1. ......................................

2. ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի վաշտի ավագ, կրտսեր սերժանտ Արմեն Արամի Ավագյանին **շնորհել** ավագ ենթասպայական «**ենթասպա**» զինվորական կոչում:

ՀՀ ՊՆ 00000 ԶՈՐԱՄԱՍԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն

Պ Ա Շ Տ Պ Ա Ն ՈՒ Թ Յ Ա Ն   Ն Ա Խ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ Ա Ն

00000 Զ Ո Ր Ա Մ Ա Ս Ի   Հ Ր Ա Մ Ա Ն Ա Տ Ա Ր

# Հ Ր Ա Մ Ա Ն

N -Ա

« ____ » _________20 թ.   ք.Երևան

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՎԱԳ ԵՆԹԱՍՊԱՅԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի և 15-րդ հոդվածի 1-ին մասի՝

## Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ   Ե Մ

ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի վաշտի ավագ, ենթասպա Արմեն Արամայիսի Բուդաղյանին **շնորհել** հերթական ավագ ենթասպայական «**ավագ ենթասպա**» զինվորական կոչում:

ՀՀ ՊՆ 00000 ԶՈՐԱՄԱՍԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

# Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
# Զ Ի Ն Վ Ա Ծ   Ո Ւ Ժ Ե Ր Ի   Գ Լ Խ Ա Վ Ո Ր   Շ Տ Ա Բ Ի   Պ Ե Տ

# Հ Ր Ա Մ Ա Ն

N          -Ա

« ____ » _________20     թ.                                                                                  ք. Երևան

## ԱՌԱՋԻՆ ԵՆԹԱՍՊԱՅԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի՝

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ   Ե Մ

1. ՀՀ ՊՆ ենթասպաների դպրոցի դասակի սերժանտի ծրագրով դասընթացներն ավարտած ներքոհիշյալ զինծառայողներին **շնորհել** առաջին ենթասպայական «**կրտսեր սերժանտ**» զինվորական կոչում՝ փոխադրելով ՀՀ զինված ուժերի ենթասպայական կազմ.

1) շարքային Արմեն Արամի Ավագյանին,

2) շարքային Պողոս Նապոլեոնի Ասատրյանին:

ՀՀ ԶՈՒ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
00000 ԶՈՐԱՄԱՍԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

# ՀՐԱՄԱՆ

N -Ա

« ____ » _________20 թ. ք.Երևան

## ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԿԱՐԳՈՎ ԱՌԱՋԻՆ ԵՆԹԱՍՊԱՅԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի ջոկի հրամանատար, շարքային Արմեն Արամայիսի Բուդաղյանին **շնորհել** առաջին ենթասպայական «**կրտսեր սերժանտ**» զինվորական կոչում՝ փոխադրելով ՀՀ զինված ուժերի ենթասպայական կազմ:

ՀՀ ՊՆ 00000 ԶՈՐԱՄԱՍԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

# Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
# Զ Ի Ն Վ Ա Ծ   Ո Ւ Ժ Ե Ր Ի   Գ Լ Խ Ա Վ Ո Ր   Շ Տ Ա Բ Ի   Պ Ե Տ

# Հ Ր Ա Մ Ա Ն

N -Ա

« ____ » _________20 թ. ք. Երևան

## ԿՐՏՍԵՐ ԵՆԹԱՍՊԱՅԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի՝

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ   Ե Մ

1. ՀՀ ՊՆ ենթասպաների դպրոցի դասակի սերժանտի ծրագրով դասընթացներն ավարտած ներքոհիշյալ զինծառայողներին **շնորհել** կրտսեր ենթասպայական «**սերժանտ**» զինվորական կոչում՝ փոխադրելով ՀՀ զինված ուժերի ենթասպայական կազմ.

1) շարքային Արմեն Արամի Ավագյանին,

2) եֆրեյտոր Պողոս Նապոլեոնի Ասատրյանին:

ՀՀ ԶՈՒ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏ

# ՀՐԱՄԱՆ

N -Ա

« ____ » _________20 թ. ք. Երևան

## ԿՐՏՍԵՐ ԵՆԹԱՍՊԱՅԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. ՀՀ ՊՆ ենթասպաների դպրոցի դասակի սերժանտի ծրագրով դասընթացներն ավարտած ներքոհիշյալ զինծառայողներին **շնորհել** կրտսեր ենթասպայական «**սերժանտ**» զինվորական կոչում.

1) կրտսեր սերժանտ Արմեն Արամի Ավագյանին,

2) կրտսեր սերժանտ Պողոս Նապոլեոնի Ասատրյանին:

ՀՀ ԶՈՒ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
00000 ԶՈՐԱՄԱՍԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

# ՀՐԱՄԱՆ

N -Ա

« ____ » _________20 թ. ք.Երևան

ՀԵՐԹԱԿԱՆ ԵՆԹԱՍՊԱՅԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄ
ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի և 15-րդ հոդվածի 1-ին մասի՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի նյութական ապահովման վաշտի դասակի հրամանատար, կրտսեր սերժանտ Արսեն Արամայիսի Ավագյանին **շնորհել** հերթական ենթասպայական «**սերժանտ**» զինվորական կոչում:

ՀՀ ՊՆ 00000 ԶՈՐԱՄԱՍԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն

Զ Ի Ն Վ Ա Ծ   Ո Ւ Ժ Ե Ր Ի   Գ Լ Խ Ա Վ Ո Ր   Շ Տ Ա Բ Ի   Պ Ե Տ

# Հ Ր Ա Մ Ա Ն

N -Ա

« ____ » _________20 թ. ք. Երևան

## ԿՐՏՍԵՐ ԵՆԹԱՍՊԱՅԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի՝

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ   Ե Մ

1. ՀՀ ՊՆ ենթասպաների դպրոցի դասակի սերժանտի ծրագրով դասընթացներն ավարտած ներքոհիշյալ զինծառայողներին **շնորհել** կրտսեր ենթասպայական «**ավագ սերժանտ**» զինվորական կոչում՝ փոխադրելով ՀՀ զինված ուժերի ենթասպայական կազմ.

1) շարքային Արմեն Արամի Ավագյանին,

2) եֆրեյտոր Պողոս Նապոլեոնի Ասատրյանին:

ՀՀ ԶՈՒ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏ

# Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
# Զ Ի Ն Վ Ա Ծ   Ո Ւ Ժ Ե Ր Ի   Գ Լ Խ Ա Վ Ո Ր   Շ Տ Ա Բ Ի   Պ Ե Տ

# Հ Ր Ա Մ Ա Ն

N -Ա

« ____ » _________20 թ. ք. Երևան

## ԿՐՏՍԵՐ ԵՆԹԱՍՊԱՅԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի՝

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ   Ե Մ

1. ՀՀ ՊՆ ենթասպաների դպրոցի դասակի սերժանտի ծրագրով դասընթացներն ավարտած ներքոհիշյալ զինծառայողներին **շնորհել** կրտսեր ենթասպայական «**ավագ սերժանտ**» զինվորական կոչում.

1) կրտսեր սերժանտ Արմեն Արամի Ավագյանին,

2) սերժանտ Պողոս Նապոլեոնի Ասատրյանին:

ՀՀ ԶՈՒ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏ

# Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
# Պ Ա Շ Տ Պ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն   Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ա Ն
# 00000 Զ Ո Ր Ա Մ Ա Ս Ի   Հ Ր Ա Մ Ա Ն Ա Տ Ա Ր

# Հ Ր Ա Մ Ա Ն

N -Ա

« ____ » _________20 թ. ք.Երևան

## ՀԵՐԹԱԿԱՆ ԵՆԹԱՍՊԱՅԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի և 15-րդ հոդվածի 1-ին մասի՝

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ   Ե Մ

ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի նյութական ապահովման վաշտի դասակի հրամանատար, սերժանտ Արսեն Արամայիսի Ավագյանին **շնորհել** հերթական ենթասպայական «**ավագ սերժանտ**» զինվորական կոչում

ՀՀ ՊՆ 00000 ԶՈՐԱՄԱՍԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն

Պ Ա Շ Տ Պ Ա Ն ՈՒ Թ Յ Ա Ն   Ն Ա Խ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ Ա Ն

00000 Զ Ո Ր Ա Մ Ա Ս Ի   Հ Ր Ա Մ Ա Ն Ա Տ Ա Ր

# Հ Ր Ա Մ Ա Ն

N -Ա

« ____ » _________20 թ.                                        ք.Երևան

ՀԵՐԹԱԿԱՆ ԵՆԹԱՍՊԱՅԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի և 15-րդ հոդվածի 1-ին մասի՝

## Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ   Ե Մ

ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի նյութական ապահովման վաշտի դասակի հրամանատար, ավագ սերժանտ Արսեն Արամայիսի Ավագյանին **շնորհել** հերթական ենթասպայական «**ավագ**» զինվորական կոչում:

ՀՀ ՊՆ 00000 ԶՈՐԱՄԱՍԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

00000 ԶՈՐԱՄԱՍԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

# ՀՐԱՄԱՆ

N -Ա

« ____ » _________20 թ. ք.Երևան

ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԿԱՐԳՈՎ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄ
ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի ավագ հրաձիգ, շարքային Արմեն Արամայիսի Բուդաղյանին **շնորհել** «**եֆրեյտոր**» զինվորական կոչում:

ՀՀ ՊՆ 00000 ԶՈՐԱՄԱՍԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

# Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
# Պ Ա Շ Տ Պ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն   Ն Ա Խ Ա Ր Ա Ր

# Հ Ր Ա Մ Ա Ն

N        -Ա

« ____ » _________20    թ.                                                                                     ք. Երևան

## ՀԵՐԹԱԿԱՆ ՍՊԱՅԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի՝

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ   Ե Մ

1. ՀՀ պաշտպանության նախարարության ներքոհիշյալ զինծառայողներին **շնորհել** հերթական սպայական զինվորական կոչումներ.

1) «**փոխգնդապետ**»՝

ա. 11111 զորամասի հրամանատարի տեղակալ, մայոր Կարեն Արգամի Հարությունյանին,

բ. 00000 զորամասի հրետանու պետ, մայոր Արման Ֆրունզեի Կարապետյանին,

2) «**մայոր**»՝

ա. 00000 զորամասի գումարտակի շտաբի պետ, կապիտան Պողոս Արմենի Հասրաթյանին,

բ. 22222 զորամասի կապի պետ, կապիտան Գագիկ Կարապետի Յուզբաշյանին:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն

Պ Ա Շ Տ Պ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն   Ն Ա Խ Ա Ր Ա Ր

# Հ Ր Ա Մ Ա Ն

N -Ա

« ____ » _________20 թ.                                                    ք. Երևան

ՀԵՐԹԱԿԱՆ ՍՊԱՅԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄ
ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի՝

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ   Ե Մ

Մ. Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարանի կլինիկական օրդինատուրայի ունկնդիր, բ.ծ. կապիտան Կարեն Արարատի Գրիգորյանին **շնորհել** հերթական սպայական «**բ.ծ. մայոր**» զինվորական կոչում:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

# Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
# Պ Ա Շ Տ Պ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն   Ն Ա Խ Ա Ր Ա Ր

## Հ Ր Ա Մ Ա Ն

N -Ա

« ____ » _________20 թ.   ք. Երևան

### ՀԵՐԹԱԿԱՆ ՍՊԱՅԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարի 20 թ. « »-ի N հրամանը՝

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ   Ե Մ

ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի գումարտակի շտաբի պետ, կապիտան Արսեն Արամայիսի Ավագյանին **վաղաժամկետ շնորհել** հերթական սպայական «**մայոր**» զինվորական կոչում:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

N -Ա

«____» _________20 թ. ք. Երևան

ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄԻՑ ՄԵԿ ԱՍՏԻՃԱՆ ԲԱՐՁՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի, , ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարի 20 թ. « »-ի N հրամանը՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի վաշտի հրամանատար, կապիտան Արսեն Արամայիսի Ավագյանին **շնորհել** զբաղեցրած պաշտոնով նախատեսված զինվորական կոչումից մեկ աստիճան բարձր սպայական «**մայոր**» զինվորական կոչում:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

# Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
# Զ Ի Ն Վ Ա Ծ   Ո Ւ Ժ Ե Ր Ի   Գ Լ Խ Ա Վ Ո Ր   Շ Տ Ա Բ Ի   Պ Ե Տ

# Հ Ր Ա Մ Ա Ն

N -Ա

« ____ » _________20 թ.                                                           ք. Երևան

## ՊԱՀԵՍՏԱԶՈՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՍՊԱՅԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 8-րդ մասի՝

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ   Ե Մ

1. Պահեստազորային պատրաստության շրջանակներում վարժական հավաքներին մասնակցած ներքոհիշյալ պահեստազորայիններին **շնորհել** պահեստազորի հերթական սպայական «**ավագ լեյտենանտ**» զինվորական կոչում.

1) պահեստազորի լեյտենանտ Պողոս Մանվելի Պապյանին (ՀՀ Տավուշի զինվորական կոմիսարիատ),

2) պահեստազորի լեյտենանտ Արամ Կորյունի Հակոբյանին (ՀՀ Նոյեմբերյանի զինվորական կոմիսարիատ)։

ՀՀ ԶՈՒ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն

Զ Ի Ն Վ Ա Ծ   Ո Ւ Ժ Ե Ր Ի   Գ Լ Խ Ա Վ Ո Ր   Շ Տ Ա Բ Ի   Պ Ե Տ

# Հ Ր Ա Մ Ա Ն

N -Ա

« ____ » _________20 թ.   ք. Երևան

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄԸ ՄԵԿ ԱՍՏԻՃԱՆՈՎ ԻՋԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 12-րդ մասի, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարի 20 թ. « »-ի N հրամանը՝

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ   Ե Մ

ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի դասակի հրամանատար, ավագ լեյտենանտ Պողոս Մանվելի Պապյանի զինվորական կոչումն **իջեցնել** մեկ աստիճանով՝ մինչև «**լեյտենանտ**»:

ՀՀ ԶՈՒ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն

Պ Ա Շ Տ Պ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն   Ն Ա Խ Ա Ր Ա Ր

# Հ Ր Ա Մ Ա Ն

N -Ա

« ____ » _________20 թ. ք. Երևան

ՀԱՏՈՒԿ ԿՈՉՄԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 15-ի N1797-Ն որոշման

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ   Ե Մ

ՀՀ ոստիկանությունից հետագա ծառայությունը շարունակելու համար ՀՀ պաշտպանության նախարարության կադրերի տրամադրության տակ տեղափոխված ոստիկանության կապիտան Կարեն Արարատի Գրիգորյանին **շնորհել** «**կապիտան**» զինվորական կոչում:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ